

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 42. Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը և պարզաբանման իրավասու մարմինները

1. Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է՝ դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում:

2. Օրենսդրական ակտի (բացառությամբ Սահմանադրության) և Կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տալ ակտը կիրառող պետական կառավարման համակարգի մարմինը, բացառությամբ հարկային և մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտի կամ Կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների, որոնք տրամադրում է Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմինը՝ իր կողմից սահմանված կարգով: Սույն մասում նշված ակտերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տալու պետական կառավարման համակարգի մարմինների ցանկը և համապատասխան բնագավառները սահմանվում են Կառավարության որոշմամբ: Մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին, կամ պարզաբանում կարող են տալ մի քանի իրավասու մարմիններ՝ համատեղ: Մեկ հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տրվել միայն մեկ անգամ, եթե նախկինը հետ չի կանչվել:

3. Սահմանադրությամբ սահմանված մարմինները տալիս են իրենց ոլորտային օրենսդրական ակտերի պաշտոնական պարզաբանումը, բացառությամբ դատական համակարգի մարմինների:

4. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տալիս են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինները:

5. Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը կարող է իրականացվել պարզաբանող մարմնի նախաձեռնությամբ, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա:

6. Պաշտոնական պարզաբանում ստանալու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր դիմումում նշում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարցերով պարզաբանում ստանալու անհրաժեշտության մասին՝ նշելով առաջադրված հարցերի իրավական հիմքերը, սեփական շահագրգռվածությամբ՝ այն իրավիճակը, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ստանալու պարզաբանում, ինչպես նաև հարցի պարզաբանման իր տարբերակը:

7. Պաշտոնական պարզաբանումը տրվում է դիմումն ստանալուն հաջորդող ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրով՝ այդ մասին իրազեկելով պաշտոնական պարզաբանում պահանջող անձին: 15 աշխատանքային օրով՝ այդ մասին իրազեկելով պաշտոնական պարզաբանում պահանջող անձին:

8. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված ժամկետում պաշտոնական պարզաբանում չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է նորմատիվ իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվելու իր ներկայացրած պարզաբանման տարբերակով: